

Ծրագիրն իրագործվում է UNDP-ի և IREX IATP-ի աջակցությամբ

ՔՀԶԿ-ն արդեն բացել է հանրագիտարանի ինտերնետային էջը, որը ժամանակ առ ժամանակ կնորացվի: Հետագայում պլանավորում ենք հրատարակել հանրագիտարան գիրք՝ կիրառելով հավաքած կենսագրական տվյալները:

Այժմ փնտրում ենք նոմինացիաներ՝ հայ կին գիտնականների համար, որոնք 20-րդ դարում հրատարակել են հոդվածներ կամ այլ աշխատություններ և ճանաչման են արժանացել իրենց գիտական հանրության կողմից

XX դարի ՀԱՅ
ԳԻՏՆԱԿԱՆ ԿԱՆԱՅՔ.
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ
ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ



*Լրացուցիչ տեղեկությունների համար,
ընդունելության կամ օգնության վերաբերյալ,
դիմել ծրագրի ղեկավարին՝
Ժակլինա Ահարոնյան*

Գրասենյակի հասցե. Աղայան 15. # 17
0009 Երևան, Հայաստան
Փոստային հասցե. Նալբանդյան 49, # 7,
0025 Երևան, Հայաստան
Հեռ: (374-10) 560 544, 575 855
Ֆաքս: (374-10) 585 677
Էլ. փոստ: info@cdcs.am
Website: <http://www.cdcs.am>



**«XX դարի հայ գիտնական կանայք».
Կենսագրական հանրագիտարան**

**Հայաստանի Քաղաքացիական
հասարակության զարգացման կենտրոնը
պատիվ ունի ներկայացնելու իր նոր ծրագիրը,
XX դարի հայ գիտնական կանայք.
Կենսագրական հանրագիտարան**


Գրանցման համար հանրագիտարանը կունենա եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն) հարցաթերթիկներ:

Երկար ժամանակ հայ կանայք հասարակայնորեն ժանաչման չեն արժանացել՝ իրենց մտավոր ներդրումների համար: Մինչ նրանց նվիրվածությունը տանը և ընտանիքին զովերգվում են, քչերը գիտեն նրանց գիտական նվաճումների մասին: Բացի այդ այս ընդհանուր անիրագրելիությունը ներկայիս երիտասարդ կանանց գերծ է պահել շատ անիրաժեշտ օրինակելի կերպարներից: Վերջին հարյուրամյակի ընթացքում տարբեր գիտությունների բնագավառներից հայ կանայք ներդրում են կատարել աշխարհի մտավոր առաջընթացին: Այս ծրագրի հիմնական նպատակն է ստեղծել մի կենսագրական հանրագիտարան, որն իր մեջ կպարունակի նրանց աշխատանքները և կապահովի հայ կանանց հաջորդ սերնդին հարուստ աղբյուրներով և օրինակելի կերպարներով: Անցյալի և ներկայի բոլոր հայ կին գիտնականները թե՛ Հայաստանից և թե՛ Սփյուռքից կներգրավվեն հանրագիտարանում:

Ծրագրի նպատակները.

- Ծրագրի հիմնական նպատակներն են՝
 - Հանրագիտարանը մատչելի դարձնել ինչպես գիտնականների, այնպես էլ գիտությունում մեծ հետաքրքրություն ցուցաբերողների համար
 - Աջակցել կին- գիտնականներին, որպեսզի նրանք տեղյակ լինեն միմյանց նվաճումների մասին

- Ոգեշնչել երիտասարդ կին- գիտնականներին գիտությունում և համագործակցության ցանցում ներգրավվելու համար,



Թիրախ խումբը.

Հիմնական ներկայացուցիչները կլինեն կին- գիտնականները, որոնք ունեն գիտական աստիճան,կոչումներ, վերջին հարյուրամյակի ընթացքում իրատարակել են հոդվածներ և այլ աշխատություններ, ճանաչվել են իրենց գիտական և մտավոր հանրության կողմից: Այս գիտնականները ներկայացնում են գրականության, լեզվի, մարդաբանության, պատմության, հնագիտության, տնտեսագիտության բնագավառները, ինչպես նաև հետևյալ գիտությունները՝ կենսաբանություն, ֆիզիկա, մաթեմատիկա, աստղագիտություն, երկրագիտություն, քիմիա, երկրաբանություն և գյուղատնտեսություն Մենք արդեն ստեղծել ենք

խորհրդատվական կոմիտե և աշխատանքային խումբ

խորհրդատվական կոմիտե.
Հանձնաժողովում կընդգրկվեն տարբեր համալսարաններ և գիտական հաստատություններ ներկայացնող տղամարդիկ և կանայք:Նրանք պատասխանատու կլինեն հանրագիտարանում ընդգրկվողների ընտրության հարցում

խորհրդատվական կոմիտեի անդամներն են՝

- Ռուտոր Ավետյան Ավանյան, **ՔՀԿ**-ի նախագահ
- Ակադեմիկոս Լիա Օսիպյան, ՀԳԱԱ
- Ակադեմիկոս Արմա Ավետիսյան, ՀԳԱԱ
- Ակադեմիկոս Թինա Ասատրյան, ՀԳԱԱ
- Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյան, ՀԳԱԱ
- Ռուտոր Վաղարշակ Մադոյան, ԱՇիրակացու անվան արտաքին հարաբերությունների համալսարանի ռեկտոր
- Ռուտոր Կարինե Դանիելյան,ԵՊՀ
- Հրանուշ Խառատյան, **ՔՀԿ**-ի փոխնախագահ, ԵՊՀ-ի դասախոս
- Սոնյա Միրզոյան, պետական կենտրոնական պատմական արխիվի տնօրեն
- Աշխատանքային խումբ**

Այս փոքր խմբում կընդգրկվեն կամավորներ (նրանցից շատերը **ՔՀԿ**-ի և նրա ենթաձյուղի՝ Կին գիտնականների խորհրդի, անդամներն են), որոնք ցանկանում են իրենց ժամանակն ու եռանդը նվիրել այս տեղեկատվության հավաքմանը:Նրանք ոչ միայն խորհրդատուներ կլինեն այլ նաև պատրաստական աշխատակիցներ, որոնք նվիրված են այս հանրագիտարանի իրատարակմանը

Աշխատանքային խմբի անդամներն են՝

- Ավետյան Ավանյան, **ՔՀԿ**-ի նախագահ
- Ժակլինա Ահարոնյան, աշխատանքային խմբի համակարգող
- Սոֆյա Դիլբարյան, համակարգչային օպերատոր
- Մելադա Աղաբեկյան,կամավոր
- Նելլի Աջաբյան,կամավոր